

ՄԱՐԶԻ ՏՈՐՖԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹, 77², և 77³ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Տորֆավան համայնքի ղեկավարին՝
 - 1) ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով խստորեն պահպանել ավագանու նիստերի հրավիրման ոչ ուշ քան 2 ամիսը մեկ պարբերականությունը.
 - 2) իրավական ակտերի փոփոխություններն իրականացնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.
 - 3) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2010թ. մայիսի 7-ի N 5 նիստի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» որոշումը.
 - 4) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով չեղյալ համարել ավագանու 2011թ. մայիսի 24-ի N 4 նիստի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու մասին» N 4 որոշումը.
 - 5) ընդունվող իրավական ակտերը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37, 40, 41-րդ հոդվածների դրույթներին.
 - 6) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում և կարգով ներկայացնել պետական լիազոր մարմին՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
 - 7) իրավական ակտերի փոփոխությունները, գործողության դադարեցումը կամ ուժը կորցրած ճանաչելը, ինչպես նաև չեղյալ համարելը իրականացնել ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխանաբար 70-րդ, 72-րդ և 75-րդ հոդվածներով.
 - 8) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2008թ. հունիսի 2-ի N 3 որոշումը.

- 9) լուծել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի գույքի և եկամուտների հայտարարագրման հարցը, որի բացակայությունը <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի <<բ>> ենթակետի համաձայն պաշտոնից ազատման հիմք է.
- 10) հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.
- 11) համայնքի սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներին համապատասխան.
- 12) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ